Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆԻ ՎՐԱՍՏԱՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Սարգիս Հայոցյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ գիտության կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Վրաստան, ք. Թբիլիսի, 19-22 հոկտեմբերի, 2022 թվական

4. Հրավիրող կողմը

Եվրոպական հանձնաժողովի հետազոտությունների և նորարարության հարցերով տնօրենություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Արևելյան գործընկերության (ԱլԳ) հետազոտությունների և նորարարության հարցերով ոչ պաշտոնական աշխատանքային խմբի 4-րդ հանդիպմանը

6. Քննարկված թեմաները

- ԱլԳ հետազոտությունների և նորարարության առաջնահերթությունները,
- ԵՄ «Հորիզոն Եվրոպա» ծրագրին ԱլԳ երկրների մասնակցության ցուցանիշները,
- ԱլԳ երկրներում Եվրոպական հետազոտության տարածքի գերակայությունների ներդրմանն ուղղված աշխատանքների ընթացքը:

7. *Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը*

Ս. Հայոցյանը ներկայացրել է ՀՀ գիտության կոմիտեի կողմից իրականացվող բարեփոխումների ծրագիրը, ՀՀ գիտական համայնքի եվրոպական հետազոտական տարածքին ինտեգրմանն ուղղված քայլերը, ինչպես նաև ԵՄ «Հորիզոն Եվրոպա» ծրագրին ՀՀ մասնակցության ընթացքի վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը:

Ս. Հայոցյանը հանդիպում է ունեցել Եվրոպական հանձնաժողովի հետազոտությունների և նորարարության հարցերով տնօրենության ներկայացուցիչների հետ, քննարկվել են ԵՄ «Հորիզոն Եվրոպա» ծրագրին Հայաստանի մասնակցության ակտիվացմանն ուղղված հետագա քայլերը և Եվրոպական հետազոտական տարածքին ինտեգրման ուղղությամբ իրականացվող աշխատանքներին Եվրոպական հանձնաժողովի հետազոտությունների և նորարարության հարցերով տնօրենության կողմից հնարավոր աջակցության հարցը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Եվրոպական հանձնաժողովի հետազոտությունների և նորարարության հարցերով տնօրենության ներկայացուցիչների հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ շարունակելու աշխատանքային շփումները և պարբերաբար իրազեկելու իրականացվող ծրագրերի ընթացքի մասին:

Որոշվել է Արևելյան գործընկերության (ԱլԳ) հետազոտությունների և նորարարության հարցերով ոչ պաշտոնական աշխատանքային խմբի 5-րդ հանդիպմանը անցկացնել 2023 թվականի գարնանը:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել ԵՄ «Հորիզոն Եվրոպա» ծրագրին Հայաստանի մասնակցության ակտիվացմանն ուղղված հետագա քայլերին առավել մանրամասն անդրադառնալ 2022 թվականի նոյեմբերի 16-ին Բրյուսելում կայանալիք Հետազոտությունների և նորարարության հարցերով ԵՄ – Հայաստան համատեղ կոմիտեի առաջին հանդիպման ընթացքում:

Գործուղման շրջանակում հոկտեմբերի 20-ին ստորագրվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի և Վրաստանի Շոթա Ռուսթավելիի անվան գիտության ազգային հիմնադրամի միջև «Գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցության մասին» մտադրությունների հուշագիրը:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Վրաստանի Շոթա Ռուսթավելիի անվան գիտության ազգային հիմնադրամի տնօրենության հետ ձեռք է բերվել պայանավորվածություն՝ սկսելու քննարկումները հուշագրով նախատեսված համագործակցության ծրագրի մշակման և դրա իրագործման ժամկետների վերաբերյալ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Recoverable Signature

X

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ

Signed by: HAYOTSYAN SARGIS 3611840777

25.10.2022թ.